ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՄԵԴԱԼՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀ ՔՆ ԲԸԱՀ-ԱՇՁԲ-14/1

ք. Երևան «19» դեկտեմբերի 2014թ

ՀՀ քաղաքաշինության նախարարությունը, ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավարի պաշտոնակատար Վարդան Նիկոյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և Երևանի ոսկերչական գործարան-1 <<ԳՆՈՄՈՆ>> ԲԲԸ-ն, ի դեմս Ընկերության գլխավոր տնօրեն Է. Գրիգորյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է մեդալների պատրաստման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետև՝ Աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների և N 1.1 հավելվածներով ներկայացված՝ «Տրդատ Ճարտարապետ» և «Մոմիկ Ճարտարապետ» ոսկե մեդալների էսքիզների:

1.2 Աշխատանքը կատարվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող Աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Աշխատանք.

ա) Չընդունել Աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Աշխատանքը սույն պայմանագրին համապատասխանող Աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված Աշխատանքը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Աշխատանքի կատարման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված Աշխատանքի արդյունքը, իսկ Աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) ստորագրմամբ:

Կատարողը Աշխատանքի կատարման ավարտից 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին է հանձնում կատարված Աշխատանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված N 3):

3.2 Արձանագրությունն ստորագրվում է, եթե կատարված Աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի կատարման ենթակա Աշխատանքի ընդհանուր գինը կազմում է 2 620 000 (երկու միլիոն վեց հարյուր քսան հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն կատարված Աշխատանքի դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում),

բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Աշխատանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 2014թ. դեկտեմբերի 25-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ <<Գնումների մասին>> ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը,

Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Կատարողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Կատարողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող մասնակիորեն կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի.

2) սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գները կորոշվեն և դրանց փոփոխությունը կգնահատվի նախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ, որի վերաբերյալ կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

Արգելվում է սույն պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Աշխատանքի ծավալների կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը.

7.4 Սույն Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող և (կամ) Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.5 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.6 Սույն պայմանագիրը և հավելվածները կազմված են 11 էջից, կնքվում են երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, 1.1, 1.2, 2 և 3 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.7 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.8 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պ ա տ վ ի ր ա տ ու	Կ ա տ ա ր ո ղ
ՀՀ քաղաքաշինության նախարարություն	**ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ-1 <<ԳՆՈՄՈՆ>> ԲԲԸ**
Հասցե՝ ք. Երևան, Կառավարական փուն թիվ 3	*Հասցե՝ ք. Երևան, Արշակունյաց 12*
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	*Հ/Հ 1510001906200100, Արարատբանկ ԲԲԸ*
Հ/Հ 900011014363,	*ՀՎՀՀ 02556646*
ՀՎՀՀ 02565827	
Աշխատակազմի ղեկավարի պաշտոնակատար՝	**Տնօրեն՝**
---------- **Վ. Նիկոյան**	---------- **Է. Գրիգորյան**
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 1
« 19» դեկտեմբերի 2014թ
N ՀՀ ՔՆ ԲԸԱՀ-ԱՇՁԲ-14/1 *կնքված*
ծածկագրով գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Նախարարության, գերատեսչության, պետական կառավարման տարածքային մարմնի անվանումը՝ ***ՀՀ քաղաքաշինության նախարարություն***
Իրականացվող ծրագիրը՝ ***01. ՀՀ քաղաքաշինության նախարարության աշխատակազմի պահպանում, բաժին 06, խումբ 06, դաս 01***
Աշխատանքի անվանումը՝ ***Մեդալների պատրաստում***

հ/հ	Աշխատանքի անվանումը	Ձեռքբերվող ապրանքների նկարագիրը
	1	**2**
1.	Մեդալների պատրաստում	1. «Տրդատ Ճարտարապետ» ոսկե մեդալն իրենից ներկայացնում է չորս կողմից ոլորված մագաղաթի տեսքով խաչաձև մակերես՝ 40x40 մմ կողմերի և 3 մմ կողային չափերով: Այն օղակով միացված է Հայաստանի Հանրապետության դրոշի էմալապատ պատկերով սեղանաձև կախիչին: Կախիչի չափերն են՝ վերևի մասում 20 մմ, ներքևի մասում 10 մմ, երկարությունը՝ 25 մմ: Մեդալի դիմերեսին՝ կենտրոնում պատկերված է Տրդատ Ճարտարապետի կողմից կառուցված Անիի Մայր Տաճարը, վերևի մասում հայերեն մեծատառերով գրված է «ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ», ներքևի մասում՝ հայերեն մեծատառերով «ՏՐԴԱՏ ՃԱՐՏԱՐԱՊԵՏ»: Մեդալի շրջերեսին՝ վերևի մասում, անգլերեն մեծատառերով գրված է «REPUBLIC OF ARMENIA», ներքևի մասում՝ անգլերեն մեծատառերով «THE MINISTRY OF URBAN DEVELOPMENT» և փորագրված է մեդալի եռանիշ համարը: Մեդալը պատրաստված է 925 հարգի արծաթից և ոսկեջրված 999 հարգի ոսկով: 10 (հինգ) հատ, միավորի գինը 131 000 (Մեկ հարյուր երեսունմեկ հազար) ՀՀ դրամ: 2.«Մոմիկ Ճարտարապետ» ոսկե մեդալն իրենից ներկայացնում է չորս կողմից ոլորված մագաղաթի տեսքով խաչաձև մակերես՝ 40x40 մմ կողմերի և 3 մմ կողային չափերով: Այն օղակով միացված է Հայաստանի Հանրապետության դրոշի էմալապատ պատկերով սեղանաձև կախիչին: Կախիչի չափերն են՝ վերևի մասում 20 մմ, ներքևի մասում 10 մմ, երկարությունը՝ 25 մմ: Մեդալի դիմերեսին՝ կենտրոնում պատկերված է Նորավանքի Սուրբ Աստվածածին եկեղեցու դրվագը, վերևի մասում հայերեն մեծատառերով գրված է «ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ», ներքևի մասում հայերեն մեծատառերով՝ «ՄՈՄԻԿ ՃԱՐՏԱՐԱՊԵՏ»: Մեդալի շրջերեսին՝ վերևի մասում, անգլերեն մեծատառերով գրված է «REPUBLIC OF ARMENIA», ներքևի մասում՝ անգլերեն մեծատառերով «THE MINISTRY OF

		URBAN DEVELOPMENT» և փորագրված է մեդալի եռանիշ համարը: Մեդալը պատրաստված է 925 հարգի արծաթից և ոսկեջրված 999 հարգի ոսկով: 10 (հինգ) հատ, միավորի գինը 131 000 (Մեկ հարյուր երեսունմեկ հազար) ՀՀ դրամ:

Աշխատանքի կատարման ժամկետը	
Սկիզբը	Ավարտը
19 .12.2014թ.	25.12.2014թ.

Պ ա տ վ ի ր ա տ ու

ՀՀ քաղաքաշինության նախարարություն
Հասցե՝ ք. Երևան, Կառավարական տուն թիվ 3
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011014363,
ՀՎՀՀ 02565827
Աշխատակազմի ղեկավարի պաշտոնակատար

---------- **Վ. Երիցյան**
(ստորագրություն)

Կ.Տ.

Կ ա տ ա ր ո ղ

ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ-1 <<ԳՆՈՄՈՆ>> ԲԲԸ
Հասցե՝ ք. Երևան, Արշակունյաց 12
Հ/Հ 1510001906200100, Արարատբանկ ԲԲԸ
ՀՎՀՀ 02556646

Տնօրեն՝

---------- **Է. Գրիգորյան**
(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 1
«19» դեկտեմբերի 2014թ.

N ՀՀՔՆ ԲԲԱՀ-ԱՇՁԲ-14/1 *կնքված*
ծածկագրով գնման պայմանագրի

<<ՏՐԴԱՏ ՃԱՐՏԱՐԱՊԵՏ>> ՈՍԿԵ ՄԵԴԱԼԻ ԷՍՔԻԶԸ

Պ ա տ վ ի ր ա տ ու

ՀՀ քաղաքաշինության նախարարություն
Հասցե՝ ք. Երևան, Կառավարական փող թիվ 3
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
***Հ/Հ** 900011014363,*
***ՀՎՀՀ** 02565827*
Աշխատակազմի ղեկավարի պաշտոնակատար՝

---------- **Վ. Նիկոյան**
(ստորագրություն)

Կ.Տ.

Կ ա տ ա ր ո ղ

ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ-1
<<ԳՆՈՄՈՆ>> ԲԲԸ
Հասցե՝ ք. Երևան, Արշակունյաց 12
***Հ/Հ** 1510001906200100, Արարատբանկ ԲԲԸ*
***ՀՎՀՀ** 02556646*
Տնօրեն՝

---------- **Է. Գրիգորյան**
(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված 1.2
«19» դեկտեմբերի 2014թ
N ՀՀՔՆ ԲԸԱՀ-ԱՇՁԲ-14/1 *կնքված*
ծածկագրով գնման պայմանագրի

<<ՄՈՄԻԿ ՃԱՐՏԱՐԱՊԵՏ>> ՈՍԿԵ ՄԵԴԱԼԻ ԷՍՔԻԶԸ



Պ ա տ վ ի ր ա տ ու

ՀՀ քաղաքաշինության նախարարություն
Հասցե՝ ք. Երևան, Կառավարական փուն թիվ 3
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
***Հ/Հ** 900011014363,*
***ՀՎՀՀ** 02565827*
Աշխատակազմի ղեկավարի պաշտոնակատար՝

----------/Վ. Նիկոյան
(ստորագրություն)

Կ.Տ.

Կ ա տ ա ր ո ղ

ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ-1
<<ԳՆՈՄՈՆ>> ԲԲԸ
Հասցե՝ ք. Երևան, Արշակունյաց 12
***Հ/Հ** 1510001906200100, Արարատբանկ ԲԲԸ*
***ՀՎՀՀ** 02556646*
Տնօրեն՝

----------/Է. Գրիգորյան
(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված 2
« » դեկտեմբերի 2014թ
N ՀՀ ՔՆ ԲԸԱՀ-ԱՇՁԲ-14/1 *կնքված*
գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Նախարարության, գերատեսչության, պետական կառավարման
տարածքային մարմնի անվանումը՝ ***ՀՀ քաղաքաշինության նախարարություն***
Իրականացվող ծրագիրը՝ ***01. ՀՀ քաղաքաշինության նախարարության աշխատակազմի պահպանում, բաժին 06, խումբ 06, դաս 01***
Աշխատանքի անվանումը՝ ***Մեդալների պատրաստում***

/Հազար ՀՀ դրամ/

N	Աշխատանքի անվանումը	Բյուջետային ծախսերի տնտ. դասակարգման հոդվածը	Նախատեսվում է ֆինանսավորել Հայաստանի Հանրապետության 2014թ.պետական բյուջեից, ըստ ամիսների՝ ընդ որում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	**Ընդամենը Տարի**
	Մեդալների պատրաստում	4269												2620.0	**2620.0**

Պ ա տ վ ի ր ա տ ու

ՀՀ քաղաքաշինության նախարարություն
Հասցե՝ ք. Երևան, Կառավարական տուն թիվ 3
ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն
***Հ/Հ** 900011014363,*
***ՀՎՀՀ** 02565827*
Աշխատակազմի ղեկավարի
պաշտոնակատար՝

---------- **Վ. Նիկոյան**
(ստորագրություն)
Կ.Տ.

Կ ա տ ա ր ո ղ

ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ-1
<<ԳՆՈՄՈՆ>> ԲԲԸ
Հասցե՝ ք. Երևան, Արշակունյաց 12
***Հ/Հ** 1510001906200100, Արարատբանկ ԲԲԸ*
***ՀՎՀՀ** 02556646*

Տնօրեն՝

---------- **Է. Գրիգորյան**
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 3
«19» դեկտեմբերի 2014թ
N ՀՀՔՆ ԲԸԱՀ-ԱՇՁԲ-14/1 *կնքված*
ծածկագրով գնման պայմանագրի

Կատարող	**Պատվիրատու**
ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆԳՈՐԾԱՐԱՆ-1 <<ԳՆՈՄՈՆ>> ԲԲԸ	**ՀՀ քաղաքաշինության նախարարություն**
Հասցե՝ ***ք. Երևան, Արշակունյաց 12***	Հասցե՝ ***Կառավարական տուն թիվ 3***
h/h ***1510001906200100, Արարատբանկ ԲԲԸ***	h/h ***900011014363, ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն***
հվհհ ***02556646***	*հվհհ* ***02565827***

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N ___
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

<<_____>> <<_____>> 20 թ.

Պայմանագրի անվանումը **ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՄԵԴԱԼՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ *«19» դեկտեմբերի 2014թ*

Պայմանագրի համարը՝ ***N ՀՀՔՆ ԲԸԱՀ-ԱՇՁԲ-14/1***

Պատվիրատուն, ի դեմս ՀՀ ՔՆ աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչության տնտեսական բաժնի պետ Ա. Տեր-Հարությունյանի և Կատարողն՝ ի դեմս << ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ-1 <<ԳՆՈՄՈՆ>> >> ԲԲԸ -ի տնօրեն Է. Գրիգորյանի, հիմք ընդունելով, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ապրանքները (այսուհետև՝ ապրանքներ). համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կատարողը <<__>> << >> 2014 թ-ից <<__>> <<_____>> 2014 թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ աշխատանքները

Կատարված աշխատանքների համառոտ նկարագիրը	Կատարված աշխատանքների քանակական ցուցանիշ	Աշխատանքների կատարման ժամկետը	Վճարման ենթակա գումարը (հազար ՀՀ դրամ)	Վճարման ժամկետը (ըստ ժամանակացույցի)
Ընդամենը	----------	----------		---------

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	**Աշխատանքն ընդունեց**
(ստորագրություն)	(ստորագրություն)
ազգանուն ----------	ազգանուն ----------
Կ.Տ	Կ.Տ